Ամալյա Պետրոսյան[1]

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ XVIII ԴԱՐԻ ԹՈՒՐՔՄԵՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանալի բառեր՝ *Մախթումկուլի Ֆրագի, թուրքմենական գրականություն, ազգային գաղափարներ, հայրենիք, թուրքմենական ցեղեր*

Թուրքմենական գրականության մեջ ազգային, հայրենասիրական գաղափարներ արծարծող ստեղծագործություններն ի հայտ են եկել շատ ավելի վաղ՝ XVIII դարում, ընդ որում, կարելի է փաստել, որ ժամանակագրական առումով նման ստեղծագործությունները ստեղծվել են ավելի վաղ շրջանում, քան թյուրքալեզու մյուս ազգերի մոտ:

Թուրքմենական գրականության զարգացումն ընթացել է թուրքմեն ժողովրդի պատմության կերտման ընթացքին զուգահեռ: XVIII դարի պատմական իրադարձություններով է պայմանավորված գրականության մեջ այն բեկումը, որը և դարձավ հետագա ամբողջ գրականության զարգացման հիմք, և սկիզբ դրվեց թուրքմենական դասական գրականությանը: Առաջնային և ամենակարևոր փոփոխությունը, որը կրեց թուրքմենական գրանությունը XVIII դարում, նոր թեմատիկան էր, ինչը նաև հարստացրեց գրականությունը նոր ժանրերով:

Թուրքմենական դասական գրականության հիմնադիր Մախթումկուլի Ֆրագիի (1724-1782 թթ.) պոեզիան ինքնին բանաստեղծի ապրած ժամանակաշրջանի պատմության գրական արտացոլումն է, ինչպես նաև այն հիմնաքարը, որի ավանդույթներով մինչև այսօր շարունակում է զարգանալ ժամանակակից թուրքմենական պոեզիան: XVIII դարում թուրքմենները բնակվում էին ներկայիս Թուրքմենստանի տարածքում տարբեր ցեղային խմբերով: Ցեղերը մշտական կռիվներ էին վարում միմյանց, ինչպես նաև տարբեր արտաքին ուժերի դեմ: Թուրքմենական հողը հաճախ էր ենթարկվում Խիվայի խանի և Բուխարայի էմիրի հարձակումներին, լարված էին հարաբերությունները Իրանի հետ[2]: Պարզ է, որ ցեղային բաժանման պարագան խոչընդոտ էր թուրքմեն ազգի ձևավորման գործընթացի ավարտի ու միասնական պետության ստեղծման համար: Այս իրադարձություններն էլ մեծ ազդեցություն

[1] ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ., էլ. փոստ՝ amalya.petrosyan@ysu.am

[2] XVIII դարի քաղաքական իրադարձությունների և դրանցում Մախթումկուլի Ֆրագիի ունեցած դերի մասին առավել մանրամասն տե՛ս՝ Аннанепесов М. Магтымгулы ве онуң заманасы, А.: 1990:

թողեցին գրական գործընթացների վրա և հիմք դարձան հայրենասիրական գրականության ձևավորման համար:

Թուրքմեն գրող և լուսավորիչ Մախթումկուլի Ֆրագիի պոեզիան իր առանձին ստեղծագործություններով արծարծում է թուրքմենական միջցեղային կռիվներին վերջ տալու, ցեղերի միավորման և միասնական ազգային պետության ստեղծման թեմաները: Թուրքմենական գրականություն Մախթումկուլի Ֆրագիի մուտքը նշանավորվեց ազգային շնչով և գաղափարներով, որի պատճառով էլ բանաստեղծը ոչ միայն հավերժացավ թուրքմենների հիշողության մեջ, այլև միաձայն ընդունվեց օտար ուսումնասիրողների կողմից որպես թուրքմեն ազգային բանաստեղծ: Ակադեմիկոս Վ. Բարտոլդի խոսքերով՝ «Չնայած թուրքմենական ցեղերի և նույնիսկ միևնույն ցեղի տարբեր տոհմերի միջև հաճախակի կռիվներին, թուրքմեն ժողովուրդը մեկ ամբողջություն էր հոգևոր առումով. նմանվողական, սակայն յուրահատուկ պոեզիան ողջ ժողովրդի ձեռքբերումն էր և նույն բանաստեղծը՝ Մախթումկուլին, բոլոր թուրքմենների ազգային բանաստեղծն էր, չառանձնացնելով ստավրոպոլցիներին (Ստավրոպոլի թուրքմեններ – Ա. Պ.), ովքեր վաղուց առանձնացել էին իրենց ցեղակիցներից և մեկուսացված էին աշխարհագրորեն»:[3]

Այս խոսքերը ևս մեկ անգամ ապացույցն են այն բացառիկ ճշմարտության, որ թուրքմենական գրականության մեջ չկա ավելի ազգային պոեզիա, քան Մախթումկուլիինն է: XVIII դարի թուրքմենական գրականության համար չէին կարող գոյություն ունենալ ավելի ազգային թեմաներ, քան հայրենասիրության, եղբայրության և միության թեմաները: Սրանք ոչ միայն զուտ բանաստեղծի ցանկություններն էին, այլև պետականության բացակայության պայմաններում ազգային գոյության հիմնայուները: Երկար ժամանակ թուրքմեն ժողովուրդն իր պետության ստեղծման համար փորձում էր գտնել տարբեր դաշնակիցներ և հույս էր կապում օտարազգի առաջնորդների հետ: Սակայն ժամանակի ընթացքում թուրքմեններն, այդ թվում և Մախթումկուլին, սկսում են գիտակցել, որ օտարների աջակցությունն ակնկալելն անօգուտ է և պետք է հույս դնեն միայն սեփական ուժերի վրա: Ազգային թուրքմենական պետության ստեղծման համար առաջին նախապայմանը թուրքմենական ցեղերի միջցեղային կռիվներին վերջ տալը պիտի լիներ:

Türkmen binasy // *Թուրքմենական տուն*

[3] Бартольд В. В., Сочинения, т. V (Работы по истории и филологии тюркских и монгольских народов), Москва, 1968, стр. 227.

Teke, ýomut, ýazyr, gökleň,[4] Ahal ili bir bolup,
(Եթե թեքե, յմութ, յազըր, գոքլեն, ախալը միավորվեն)
Kylsa bir jaýga ýöriş, açylar gül – lälesi.[5]
(Միասին թե առաջ շարժվեն, կծաղկի պարտեզը – Ա. Պ.)

Ե՛վ «Թուրքմենական տուն» («Türkmen binasy») բանաստեղծության վերոնշյալ երկտողը, և՛ «Արցունք ենք թափում» («Döker bolduk ýaşymyz») բանաստեղծության հետևյալ քառատողը խոսում են թուրքմենական ցեղերի միացյալ ուժի զորության մասին: Սակայն Մախթումկուլին լավ է հասկանում, որ այդ ուժը կարող է դառնալ ավելի մեծ, եթե բոլոր ցեղերը մեկ պետության ծառայեն:

Türkmenler baglasak bir ýere bili, *Թուրքմեններ, թե միավորվենք*
Gurudars Gulzumy, derýaýy-Nili, *Կչորացնենք Կուլզումն ու Նեղոս գետը,*
Teke, ýomut, gökleň, ýazyr, alili – *Թեքե, յմութ, յազըր, ալիլի,*
Bir döwlete gulluk etsek bäşimiz.[6] *Մի պետության թե մենք ծառա լինենք)*

Նույն գաղափարն է ամփոփված Մախթումկուլիի «Թուրքմենստանին» («Türkmeniň») բանաստեղծության հետևյալ տողերում.

Köňüller, ýürekler bir bolup başlar,
Tartsa ýygyn, erär topraklar – daşlar,
Bir suprada taýýar kylynsa aşlar,
Göteriler ol ykbaly türkmeniň.[7]
Թե համախմբվեն մարդիկ ու ցեղեր, սրտեր չեն մաշի,
Միացյալ ուժը ապառաժներ ու ժայռեր կտաշի,
Մեկ սուփրայի շուրջ թե միասնաբար մենք նստենք ճաշի,
Երես չի թեքի ճակատագիրը Թուրքմենստանի:[8]

Հեղինակի այս բանաստեղծությունը XVIII դարում ոչ միայն Մախթումկուլիի, այլև ողջ թուրքմեն ազգի ապագա անկախ պետության երազանքի գեղարվեստական արտացոլումն է: Այն բացառիկ սեր է վայելում թուրքմենների շրջանում: Բանաստեղծը ներկայացնում է Ջեյխունից (Ամուդարիա գետի արաբական անվանումը – Ա. Պ.) մինչև Խազար (Կասպից ծով – Ա. Պ.) տարածվող թուրքմենական անկախ պետության պատկերը, որտեղ թագավորելու են եղբայրությունը, սերն ու

[4] Մախթումկուլին սերում էր թուրքմենական գյոքլեն (gökleň) ցեղից, որը բնակություն էր հաստատել Գառըգալայում (Garrygala) (գտնվում է ներկայիս Թուրքմենստանի Բալկան վիլայեթում):
[5] Magtymguly. Goşgular, Türkmen döwlet neşirýat gullugy. Aşgabat, 2010, s. 12.
[6] Նույն տեղում, էջ 17:
[7] Նույն տեղում, էջ 10:
[8] Հոդվածում ներառված թուրքմեներեն բանաստեղծությունների հայերեն թարգմանությունները կատարվել են հոդվածի հեղինակի կողմից՝ տողացի: Բացառություն է «Թուրքմենստանին» բանաստեղծությունը, որի հայերեն թարգմանությունը վերցված է բանաստեղծի հայերեն թարգմանությունների նոր ժողովածուից *(տե՛ս՝ Մահթումկուլի Ֆրագի. Հատընտիր, Արտագերս, Երևան, 2014, էջ 13):*

համերաշխությունը բոլոր թուրքմենական ցեղերի մեջ: Ապագայի թուրքմենական պետության մեջ շեն են տները, և թևածում է հարգանքը առաջնորդի հանդեպ: Սա պոետի հայրենասիրական ոգով գրված և ազգային գաղափարներով տոգորված պոեզիայի գագաթնակետն է: «Թուրքմենստանին» բանաստեղծության ամեն տողը անգիր գիտի յուրաքանչյուր թուրքմեն, ինչը վկայում է, որ Մախթումկուլի խոսքը պարարտ հող է գտել թուրքմենների ենթագիտակցության մեջ:

Թուրքմենական գրականության մեջ պետության, ինչպես նաև վերջինիս արդար ղեկավարի կերպարի մասին խոսում է նաև Մախթումկուլի Ֆրագիի հայրը՝ Դովլեթմամմեդ Ազադին՝ իր «Ազատ քարոզ» («Wagz-y Azat») պոեմ-տրակտատում: Ազատ քարոզ պոեմը լիրիկական ստեղծագործություն է, որը խորապես քննում է XVIII դարի թուրքմենների կացությունը: Պոեմում քննարկվում են մի շարք հարցեր, որոնք ամփոփված են պոեմի չորս գլուխներում[9]: Այս պոեմն առաջին աշխատությունն էր թուրքմենական գրականության մեջ, որը պարունակում էր ռեալիզմի որոշակի տարրեր: Պետականության բացակայության պայմաններում Ազադիին հուզող առաջին հարցը արդար առաջնորդի, պետության ղեկավարի կերպարի կերտումն է, որին էլ նվիրված է պոեմի առաջին գլուխը: Ավելին, բանաստեղծն, իր պոեմում ներկայացնում է տարբեր պատմական կերպարներ, փորձելով գտնել իր երևակայական թուրքմենական պետության արդարամիտ առաջնորդին: Ազադին տեսնում է երկրի առաջնորդին որպես զինվորական առաջնորդ և կարևորում միասնական բանակ ունենալու գաղափարը:

Սակայն ինչպես նախորդ դարերի ստեղծագործողների հիմնական մասը, Դովլեթմամմեդ Ազադին ևս ստեղծագործում էր ոչ թե խոսակցական թուրքմեներենով, այլ միջնադարի արևելյան գրականության լեզուներով՝ պարսկերենով, ինչպես նաև Կենտրոնական Ասիայում մեծ տարածում գտած մյուս լեզվով՝ չաղաթայերենով[10], ինչը մեծ դժվարություն էր առաջացնում թուրքմենների շրջանում պոեմի և նրանում եղած գաղափարների տարածմանը:

---

[9] «Ազատ քարոզ» («Wagz-y Azat») պոեմ-տրակտատը կազմված էր հետևյալ գլուխներից. 1-ին գլուխ՝ Փաղիշահների մասին, 2-րդ գլուխ՝ Այն օգնության մասին, որը աղքատներին ցույց պիտի տան հարուստները, 3-րդ գլուխ՝ Մտավորականների մասին, 4-րդ գլուխ՝ Դերվիշների մասին:

[10] Չաղաթայերենի և չաղաթայական գրականության ուսումնասիրման գործում նշանակալից ներդրում են ունեցել ակադեմիկոսներ Վ. Վ. Բարտոլդն *(Чагатайская литература (стр. 606) // Бартольд В. В., Соченения, т. V (Работы по истории и филологии тюркских и монгольских народов), Издательство «Наука», Главная редакция восточной литературы, Москва, 1968)* ու Ա. Ն. *Սամոյլովիչը (К истории литературного среднеазиатского-турецкого языка (стр. 923), О среднеазиатско-турецком литературном языке и его отношении к другим турецким языкам (стр. 941) // Самойлович А. Н. Тюркское языкознание. Филология. Руника. Отд-ние ист.-филол. Наук РАН. – М.: Вост. Лит., 2005):*

Թուրքմեն մտավորականներ Մ. Քյոսեևն ու Բ. Ախունդովը, Դովլեթմեմմեդ Ազադիի «Ազատ քարոզ» պոեմի նախաբանում (հրատարակված 1962 թ.-ին Թուրքմենական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Մախթումկուլիի անվան գրականության ինստիտուտի կողմից) խոսելով պոեմի կարևորության մասին, նշում են այն հիմնական պատճառները, որոնք խոչընդոտում էին ընթերցողների շրջանում պոեմի գաղափարների լայն տարածմանը. «Այս ստեղծագործությունը չկարողացավ լայնորեն տարածում գտնել ժողովրդի շրջանում իր լեզվի դժվարության և մեծամասնությանը անհասկանալի լինելու պատճառով: Քանի որ բանաստեղծը չի օգտվել ժողովրդական բանահյուսությունից և գրել է իր ստեղծագործությունը գրավոր գրականության և մեդրեսեի լեզվական ազդեցության տակ»:[11]

Ի տարբերություն Ազադիի, Մախթումկուլիի պոեզիան շատ ավելի ռեալիստական էր, նրա հերոսները ժամանակի պատմական անձինք էին, որոնց հետ էլ բանաստեղծը կապում էր թուրքմեն ժողովրդի ճակատագիրը: Նմանօրինակ կերպարներից է Չովդուր խանը, ով նաև Մախթումկուլիի ժամանակակիցն ու մտերիմն էր:

Մախթումկուլիի «Չովդուր խան» («Çowdur han») բանաստեղծությունը լի է մեծ վշտով: Բանաստեղծը սգում է Ահմեթ շահից օգնություն խնդրելու մեկնած Չովդուր խանի մահը, ինչը մեծ հարված էր թուրքմենական գյոքլեն և յոմութ ցեղերի համար:

Gökleň, ýomut, ýola çykyp, bakyşyp,
(Ճանապարհին են նայում գյոքլենն ու յոմութը)
Umyt etdi, geler aman, Çowdur han,
(Հույս ունեն, որ կենդանի կվերադառնա Չովդուր խանը)
Molla, müfti Haka doga okyşyp, *(Մոլլան ու մուֆթին Աստծուն աղոթելով)*
Gutardylar kitap – Gurhan, Çowdur han. *(Ավարտեցին Ղուրանը, Չովդուր խան)*
Magtymguly, uçdy ol agyr guşum, *(Մախթումկուլի, թռավ այն ծանր թռչունս)*
Arkadagym, eziz syrdaş, gardaşym, *(Հովանավորս, սիրելի բարեկամս, ընկերս)*
Many saça bilmez çalaran başym, *(Ոչինչ չի հասկանում ճերմակող գլուխս)*
Büräp aldy ony duman, Çowdur han.[12] *(Մշուշն է պատել այն, Չովդուր խան*

Մախթումկուլին ճիշտ է ըմբռնել նաև լեզվի՝ ազգապահպանման կարևոր գործոնի դերն ու նշանակությունը: Բանաստեղծը ստեղծագործել է ժամանակի խոսակցական թուրքմեներենով և դարձել թուրքմեներեն գրական լեզվի հիմնադիրը: Մայրենի լեզվով ստեղծագործելը կարևոր դեր է խաղացել, որպեսզի բանաստեղծությունները շատ արագ տարածվեին թուրքմեն ժողովրդի շրջանում: Ավելին, գրագիտության ցածր մակարդակի

[11] Азады Д. Вагзы-азат, ТССР Ылымлар Академиясының Неширяты, Ашгабат, 1962, стр. 16.
[12] Magtymguly, նշվ. աշխ., էջ 20.

պայմաններում նրա բանաստեղծություններից շատերը դարձել են երգեր և բախշիների միջոցով տարածվել ժողովրդի մեջ:

Ամփոփելով նշենք, որ XVIII դարում սկզբնավորվեց այն ազգային գրականությունը, որը ազգային ինքնագիտակցության բարձրացման գործում կարևոր դեր կատարեց նաև հաջորդ դարերի ազգային-ազատագրական պայքարի ընթացքում, որը մղում էին թուրքմենական ցեղերը Ռուսական Կայսրության դեմ[13]: XIX և հետագա դարերի պատմական իրադարձությունները ևս իրենց գրական-գեղարվեստական արտացոլումը գտան գրականության մեջ[14], և վստահաբար կարող ենք ասել, որ ողջ հետագա դարերի ազգային գրականությունը սնվում էր XVIII դարի թուրքմենական գրականությունից և հատկապես Մախթումկուլիի պոեզիայից:

ОТРАЖЕНИЕ НАЦИОНАЛЬНЫХ ИДЕЙ В ТУРКМЕНСКОЙ ЛИТЕРАТУРЕ XVIII ВЕКА

Амаля Петросян

(Резюме)

Статья посвящена вопросу отражения национальных идей в туркменской литературе XVIII века. В ней, в частности, рассматривается творчество двух писателей: Махтумкули Фраги и Довлетмаммеда Азади. В статье нами также анализируются историческе события XVIII века, которые стали главной причиной рождения и развития национальных идей в туркменской литературе.

THE REFLECTION OF NATIONAL IDEAS IN THE EIGHTEENTH – CENTURY TURKMEN LITERATURE

Amalya Petrosyan

(Summary)

This article investigates the representation of the national perceptions in the eighteenth – century Turkmen literature. Particularly, the article analyzes the literary heritage of Magtymguly Pyragy and Dowletmammed Azady. Additionaly, we address the historical context where these national ideas originated and evolved.

---

[13] 19-րդ դարում թուրքմենների հիմնական պայքարը, որը իսկապես վերածվեց ազգային-ազատագրական պայքարի, ուղղված էր Ռուսական կայսրության դեմ, որի գլխավոր նպատակն էր իրեն ենթարկել Թուրքմենստանի ողջ տարածքը: Երկու ռազմական արշավները, որոնք ձեռնարկվեցին ցարական կառավարության կողմից 1876-1881 թթ.-ին, ավարտվեցին ռուսների հաղթանակով: Մանրամասն տե՛ս՝ *Давлетов Дж., Ильясов А. Присоединение Туркмении к России, Ашхабад, 1972:*

[14] Ցարական ուժերի դեմ պայքարն ու հատկապես Գյոք-թեփե ամրոցի մատույցներում տեղի ունեցած վճռորոշ մարտի նկարագրություններն իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել թուրքմեն մի շարք հեղինակների գեղարվեստական երկերում, որոնք կարևոր նշանակություն ունեն նաև այս ժամանակահատվածի պատմական իրադարձությունների ուսումնասիրման տեսանկյունից: Օրինակ՝ Աթա Գոլշուդովի, Մէմմեդ Սեիդովի, Աթա Դուրդիևի և մյուս արձակագիրների ստեղծագործություններում: